ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 107-Լ

«25» 12 2023 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 8-Ի N 54 ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր հատուկ հանձնարարություններով վարչություն ստեղծելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2019 թվականի սեպտեմբերի 24-ի N 39 հրամանում լրացում կատարելու մասին» 2023 թվականի օգոստոսի 2-ի N 61-Լ հրամանը, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության դատախազությունում «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրական հաշվետվության վարման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2019 թվականի դեկտեմբերի 27-ի

N 77 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2021 թվականի հուլիսի 8-ի N 54 հրամանում կատարել հետևյալ լրացումները՝

1) Հավելված N 2-ի 7-րդ կետը լրացնել նոր՝ 13.1-րդ ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«13.1) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր հատուկ հանձնարարություններով վարչությունը՝ հաշվետվության ձևի 1-3-րդ, 5-րդ, 7-14-րդ բաժինները, իսկ անհրաժեշտության դեպքում լրացնում է նաև այլ բնագավառի՝ հաշվետվության ձևի համապատասխան բաժինը (բաժինները):»:

2) Հավելված N 4-ի 7-րդ կետը լրացնել նոր՝ 13.1-րդ ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«13.1) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր հատուկ հանձնարարություններով վարչությունը՝ հաշվետվության ձևի 1-3-րդ, 5-րդ, 7-15-րդ բաժինները, իսկ անհրաժեշտության դեպքում լրացնում է նաև այլ բնագավառի՝ հաշվետվության ձևի համապատասխան բաժինը (բաժինները):»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին և օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ
ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ